Ծանուցում

Ամսաթիվ. 11 մայիսի, 2018թ.

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

Ուղղված է. Բարձրագույն Իշխանություններին, օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահություններին, տարածքային յոթանասունականներին, ցցերի, միսիաների և շրջանների նախագահներին, եպիսկոպոսներին և ճյուղերի նախագահներին, երեցների քվորումների նախագահություններին, ցցերի և ծխերի Սփոփող Միության, Երիտասարդ Կանանց և Երիտասարդ Տղամարդկանց նախագահություններին

Ում կողմից. Քահանայության և ընտանիքի բաժանմունք (801-240-2134)

Թեմա. Հաճախակի տրվող լրացուցիչ հարցեր ամրապնդված Մելքիսեդեկյան քահանայության քվորումների և Սփոփող Միությունների սպասավորության վերաբերյալ

2018 թվականի ապրիլի 2-ի Առաջին Նախագահության՝ «Սպասավորել ամրապնդված Մելքիսեդեկյան քահանայության քվորումներով և Սփոփող Միություններով» նամակի ներդիրը պարունակում էր որոշ հարց ու պատասխաններ, որն օգնում է կիրառության մեջ դնել 2018 թվականի ապրիլ ամսվա գերագույն համաժողովին հայտարարված փոփոխությունները:

Լրացուցիչ հարցերի պատասխաններն ընդգրկված են այս ծանուցման մեջ: Այս հարցերն ու պատասխանները նույնպես ավելացվել են ministering.lds.org կայքի հաճախակի տրվող հարցերի էջում:

Սպասավորել ամրապնդված Մելքիսեդեկյան քահանայության քվորումներով և Սփոփող Միություններով

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

Հաճախակի տրվող լրացուցիչ հարցեր. 11 մայիսի, 2018թ.

Քվորումներ և Սփոփող Միություններ

1. **Արդյո՞ք Երեցների քվորումի և Սփոփող Միության վրա կենտրոնացումն ամրապնդում է եպիսկոպոսի և ծխի խորհրդի դերը:**

   Այո: Եպիսկոպոսը նախագահող քահանայապետն է և «առաջնորդություն ու ցուցումներ է տալիս ծխի մյուս ղեկավարներին» (*Հեռնարկ 1,* 2.1.1): Նա վերանայում և հաստատում է սպասավորության հանձնարարությունները: Եպիսկոպոսի ղեկավարության ներքո ծխի խորհուրդը շարունակում է իր կարևոր դերը՝ «օգնել անհատներին կառուցել իրենց վկայությունները, ստանալ փրկարար արարողությունները, պահել պատվիրանները և դառնալ Հիսուս Քրիստոսի սրբագործված հետևորդները» (*Հեռնարկ 2,* 4.4): Ամրապնդված երեցների քվորումը և Սփոփող Միությունը, ներկայացված իրենց նախագահների կողմից, ովքեր նաև ծխի խորհրդի անդամներ են, կբարձրացնեն այդ խորհրդի արդյունավետությունը:

2. **Ո՞ր քվորումին են պատկանում տաճարների, միսիաների և միսիոներների ուսուցման կենտրոնների նախագահությունները:**

   Այդ եղբայրներն իրենց ծխերի երեցների քվորումի անդամներ են:

3. **Ցցերի մակարդակով, արդյո՞ք ճյուղերի նախագահություններում ծառայող քահանայապետերը հանդիսանում են քահանայապետերի քվորումի անդամներ:**

   Ոչ: Ցցերում, ճյուղերի նախագահություններում ծառայող քահանայապետերը չեն հանդիսանում քահանայապետերի քվորումի անդամներ: Քահանայապետերի քվորումի անդամները նրանք են, որոնց կոչումները ցցի նախագահությունում, եպիսկոպոսությունում, բարձրագույն խորհրդում և գործող հայրապետի պաշտոններում պահանջում է նրանց լինել քահանայապետեր:

4. **Արդյո՞ք եպիսկոպոսությունում ծառայող երեցները (օրինակ, երիտասարդ չափահասների ծխում) հանդիսանում են քահանայապետերի քվորումի անդամներ:**

   Ոչ: Եպիսկոպոսությունում ծառայող երեցները չեն հանդիսանում քահանայապետերի քվորումի անդամներ:

5. Բացի սպասավորության եռամսյակային հարցազրույցներից, արդյո՞ք երեցների քվորումի նախագահությունները տարին մեկ անգամ պետք է այցելեն կամ հարցազրույցներ անցկացնեն քվորումի անդամների հետ (տես *Ձեռնարկ 2,* 7.3.2)։

Այո։ Որպես ընդհանուր պարտականությունների մաս, երեցների քվորումի նախագահությունները քվորումի անդամների հետ պետք է առնվազն տարին մեկ անգամ հարցազրույցներ անցկացնեն քահանայության բոլոր պարտականությունների վերաբերյալ, ներառյալ՝ քահանայություն կրողի, նրա կնոջ և նրա ընտանիքի որպիսության վերաբերյալ։ Այդ հարցազրույցները կարող են անցկացվել ողջ տարվա ընթացքում։ Այդ քննարկումը չպետք է համադրել սպասավորության հարցազրույցի հետ, որի ժամանակ նաև ներկա է գտնվում զուգընկերը։

6. Ո՞վ կարող է օգնել երեցների քվորումի և Սփոփող Միության նախագահություններին փրկության աշխատանքը կատարելիս։

Երեցների քվորումի ու Սփոփող Միության նախագահությունները անհրաժեշտության դեպքում փրկության աշխատանքը կատարելու նպատակով կարող են դիմել անդամների օգնությանը։ Օրինակ, նրանք կարող են կանչել անդամներին ղեկավարելու և օժանդակելու այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են՝ ծառայություն, տաճարային և ընտանեկան պատմություն, կիսվել ավետարանով և բարօրություն։

7. Կարո՞ղ է ծուխը մեկից ավելի երեցների քվորում կամ Սփոփող Միություն ունենալ։

Այո։ Համաձայն Վարդապետություն և Ուխտեր 107.89 հատվածի, երբ ծխում առկա են մեծաթիվ Մելքիսեդեկյան Քահանայության ակտիվ անդամներ, ղեկավարները կարող են կազմակերպել մեկից ավելի երեցների քվորումներ։ Նման դեպքերում յուրաքանչյուր քվորում պետք է ունենա տարիքի, փորձի, քահանայության կոչումի և զորության ողջամիտ հավասարակշռություն։ Նույն սկզբունքները կիրառելի են Սփոփող Միության համար։

Սպասավորություն

8. Որքանո՞վ է սպասավորությունը կիրառելի քահանայապետերի քվորումի անդամների համար։

Իրենց եպիսկոպոսի ղեկավարությամբ, ով հանդիսանում է ծխի նախագահող քահանայապետը, քահանայապետերի քվորումի անդամներին և նրանց ընտանիքներին երեցների քվորումի և Սփոփող Միության կողմից կցվում են սպասավորող եղբայրներ և քույրեր։

Քանի որ ցցերի նախագահությունները և եպիսկոպոսությունները պատասխանատու են ցցերի կամ ծխերի բոլոր անդամների համար, այդ եղբայրները սովորաբար չեն նշանակվում սպասավորող եղբայրներ անձանց կամ ընտանիքների համար։ Ելնելով տարածքի պայմաններից, բարձրագույն խորհրդականները և գործող

հայրապետերը կարող են նշանակվել սպասավորող եղբայրներ, որը որոշում է ցցի նախագահը: Այդ ժամանակ նշանակումը կատարվում է նրանց երեցների քվորումի նախագահի կողմից՝ նրանց ծխերի եպիսկոպոսի ղեկավարության ներքո:

Բացի այնպիսի կարևոր պարտականություններից, ինչպիսիք են նախագահող քահանայապետը և Իսրայելի ընդհանուր դատավորը, եպիսկոպոսներն իրենց խորհրդականների հետ միասին ունեն որոշակի պարտականություն՝ հոգ տանել երիտասարդների մասին: Վարդապետություն և Ուխտեր 107.15 կարդացվում է, «Եպիսկոպոսությունն այս [Ահարոնյան] քահանայության նախագահությունն է, և կրում է դրա բանալիներն ու իշխանությունը»: *Հեռնարկ 1,* 2.2, նշվում է. «Եպիսկոպոսության անդամները հսկում և դաստիարակում են ծխի երիտասարդ տղամարդկանց և կանանց»:

Նմանապես, ցցի նախագահը ցցի նախագահող քահանայապետն է, ով «ցցի գլխավոր հոգևոր ղեկավարն է» (*Handbook 1,* 1.1.1) և «նախագահում է փրկության աշխատանքի վրա» (*Handbook 1,* 1.1.2):

9. Կարո՞ղ են երեցների քվորումի և Սփոփող Միության նախագահները լրացուցիչ խորհրդականներ կանչել, ովքեր կօգնեն սպասավորության գործում:

Ոչ: Նախագահն ունի երկու խորհրդական: Եթե ղեկավարները գտնում են, որ լրացուցիչ օգնության կարիք կա, նրանք կարող են խորհրդակցել իրենց եպիսկոպոսի հետ և կանչել մեկ կամ ավելի սպասավորող քարտուղարներ: Օրինակ, այդ սպասավորող քարտուղարները կարող են նշանակվել, որպեսզի պլանավորեն սպասավորության հարցազրույցները և պատրաստեն հարցազրույցների եռամսյակային հաշվետվությունը:

10. Ո՞րն է սպասավորող համակարգողների և ղեկավարների դերը:

Սպասավորող համակարգողների և ղեկավարների կոչումները դադարեցվել են: Այն մարդիկ, ովքեր կանչվել են այդ կոչումներին, պետք է ազատվեն ծառայությունից:

11. Ո՞վ է վարում սպասավորության հարցազրույցները:

Երեցների քվորումի և Սփոփող Միության նախագահությունների բոլոր անդամները վարում են սպասավորության հարցազրույցները: Նույնիսկ, մեծ ծխերում ղեկավարների համար օգտակար և իրագործելի կլինի, եթե ամեն շաբաթ մի քանի հարցազրույցներ անցկացվեն նախագահության բոլոր անդամների կողմից: Պարտադիր չէ, որ սպասավորության հարցազրույցները երկար տևեն արդյունավետ լինելու համար:

12. Եռամսյակի ընթացքում ե՞րբ են ղեկավարները վարում սպասավորության հարցազրույցներ:

Սպասավորության հարցազրույցները կարող են և պետք է անցկացվեն յուրաքանչյուր եռամսյակի *ընթացքում* և չպետք է սպասել եռամսյակի վերջին

շաբաթվան կամ վերջին ամսվան: Եթե ղեկավարները կանոնավոր կերպով անցկացնեն հարցազրույցները, նրանք կհասկանան, որ կարող են իրագործել սպասավորության հոգևոր և աշխարհիկ նպատակները:

Երիտասարդների ընդգրկումը սպասավորության ջանքերում:

13. Կարո՞ղ են երիտասարդ տղամարդիկ և կանայք նշանակվեն սպասավորելու չափահաս զուգընկերների հետ:

Այո: «Բռնության կանխարգելումն ու արձագանքը» վերջերս հրատարակված փաստաթղթում ներկայացված ուղեցույցները սպասավորող զուգընկերություններին հնարավորություն են տալիս երիտասարդներին կցել չափահասների հետ: «Սպասավորությունը» չի համարվում «միջոցառում» կամ «դասարան», ինչպես նշված է այդ ուղեցույցներում:

Ղեկավարները պետք է ոգեշնչված որոշում կայացնեն, երբ երիտասարդներին նշանակում են սպասավորող զուգընկերներ: Չափահաս զուգընկերները պետք է խուսափեն այնպիսի իրավիճակներից, որոնք կարող են սխալ հասկացվել: Նրանք պետք է զգուշավորություն ցուցաբերեն առանձին մնալու իրավիճակներում, որպեսզի երիտասարդներն ապահով և գոհացնող սպասավորության փորձառություն ունենան: Բացի այդ, պետք է խելացի գտնվել և երիտասարդներին չկցել խնդրահարույց ընտանիքներին:

14. Արդյո՞ք պետք է համաստեղության և դափնիների դասարանի անդամները սպասավորության հանձնարարություններ ունենան:

Համաստեղության և դափնիների դասարանի անդամներին կարելի հրավիրել սպասավորության: Ծնողներն ու ղեկավարները խորհրդակցում են յուրաքանչյուր երիտասարդ կնոջ հետ, և եթե նրա հանգամանքները թույլ են տալիս և նա ցանկանում է ծառայել, ապա նրան կարող է տրվել սպասավորության հանձնարարություն: Երիտասարդ կանայք զուգընկերներ են ծառայում Սփոփող Միության քույրերի հետ:

15. Ո՞վ է սպասավորության հանձնարարությունները տալիս երիտասարդներին:

Եպիսկոպոսի հավանությամբ, Սփոփող Միության նախագահության անդամը սպասավորության հանձնարարությունները տալիս է Համաստեղության և դափնիների դասարանի անդամներին: Եվ, եպիսկոպոսի հավանությամբ, երեցների քվորումի նախագահության անդամը սպասավորության հանձնարարությունները տալիս է ուսուցիչներին և քահանաներին: